Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

# ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

28.11.2014թ.

Համաձայն << ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով << Վայոց ձորի մարզպետի 21.11.2014թ.-ի թիվ 121 կարգադրությունը, Վայոց ձորի մարզային ենթակայության <<Եղեգնաձորի երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ-ում անցկացվեց 2013թ.-ի մշակութային միջոցառումների ֆինանսական աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ Վ.Կարապետյանի և ներքին աուդիտոր՝ Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Սահակյանն և հաշվապահ Լ.Հունանյանը:

**Աուդիտի հիմնական ուղղությունները.**

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

**Ընդհանուր տվյալներ.**

**Աշխատանքները կատարեցին՝ Վ.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երկու տարվա աշխատանքային փորձ:**

Կազմակերպության կողմից իրականացվել է 2 մշակույթային միջոցառում 650 հազ.դրամ ընդհանուր գումարով, համաձայն սուբսիդիայի հատկացման պայմանագրերի: Առկա են նախահաշիվները՝ կազմված մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից/պատասխանատու ստորաբաժանում/, հաստատված մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից: Ըստ մշակույթային միջոցառումների առկա են ծախսերը հիմնավորող փաստաթղթերը/սցենարները, հաշիվ-ապրանքագրերը, դրամարկղի ելքի օրդերները, միջոցառումների մասնակիցների հետ կնքված պայմանագրերը, ընդունման-հանձնման ակտերը/:

**Թերություններ և խախտումներ.**

Սուբսիդիայի հատկացման թվով 2 պայմանգրերում բացակայում է պայմանագրի կատարման ժամկետը:

**Առաջարկում ենք.**

ա/ Կնքված պայմանագրերում ապահովել պայմանագրերի կատարման ժամկետների առկայություն:

Աուդիտորական խմբի ղեկավար՝ Վ. Կարապետյան
Խմբի անդամ՝ Հ. Ավետիսյան
Թանգարանի տնօրեն՝ Կ. Սահակյան
Հաշվապահ՝ Լ. Հունանյան